

տունը կատարել : Կորնուս մեծ. վասն զի Պ. Լամար-
բին որ առիք չէր փախցրներ Հայոց ազգին վրայ
ունեցած մեծ համարմունքը յայտնելու, անշուշտ էմբ
որ գեղեցիկ առիք կը համարէր զայս իւր հրաշալի
գրչովը Պ. Գալամ ու Պ. Տրքեան բախտաւոր նկար-
չացը պէս՝ նաեւ հայկազն պատկերահանին սրխ-
րալի վրձնոյն անմահութեան էջերուն գեղեցկահիւս
ու հրաշափայլ էջ մի եւս աւելցրնելու, անբառամ
փառաց պսակին վարդ մը բոյորելու :

(Մնացորդն յաջորդ անգամ.)

manifeste son estime pour notre nation, n'eût certaine-
ment pas laissé échapper cette occasion. Son admirable
plume n'eût pas manqué de livrer à l'immortalité le mer-
veilleux pinceau de notre peintre arménien, comme il l'a
fait déjà pour ses confrères plus heureux, MM. Calame et
Duquesne. Il se fût fait une joie d'ajouter une belle page
à son histoire et une rose à sa couronne impérissable.

(La suite au prochain numero.)

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԲԱՆԺ

ԿԱՐԱՊ.



Թեպետ ջրէն հեռու մեծցած կարապի (քոյ)
ձագը ջրին ինչ բան ըլլալը լա չկրնար գիտնալ,
բայց բնութիւնը կըզգայ անկեց զրկուած ըլլալը,
ու կըտկարանայ, կըհալի կըմաշի. երբեմն տագ-
նապած պտըտիլը, շատ անգամ վիզը ոյրելով
տրտում տխուր քնեւորն մէջ ծածկելը, ու փե-
տուրներուն դեղնութիւնը բաւական կըցուցնեն
րէ վախճանին հասած չէ: Այն վիճակին մէջ հոտած
ձահիճ մըն ալ որ գտնէ, մէկէն մէջը կընետուի
ազնիւ բոջուներ, եւ տղմին մէջ լողալով աղտոտ
գարշելի բան մը կըզառնայ: Բայց տուր անոր
կենդանի ջրոյ աղբիւր մը. բոլ յաղթաշուր գետին
ալիքը վրան զարնելով ոյծը տեղը բերեն, այն
ատեն կըտեսնես րէ կարապն ինչ է: Քանի մը

օրուան մէջ իւր ձիւնափայլ ձերմըկութեամբը,
վայելչագեղ ու վսեմ կերպովը, արագ շարժուն-
քովը կըցուցնէ քեզի իւր բնութիւնը. եւ րէ
մեծնալուն, զօրանալուն ու փառաւորութիւնն ինչ
բան պակսեր էր :

Այսպէս է նաեւ մեր հոգին :

ՏԻԿԻՆ ՆԵՔԷՐ ՏԸ ՍՈՍԻՐ.

Մօրս դաստիարակութեան ոճը արուեստ չէր,
հապա սեր էր. եւ անոր համար է որ անսխալ էր :

ԼԱՄԱՐԹԻՆ.